

ՎԵՑԱՄԵԱՅ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Ա. Փ. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

1907—1912



ՑՊԱԿՐ. Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

1913

ՏԵՂՄԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Օ. ԱՐՅՈՒՆԱԿ

№ 211

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱԳԱԳԱԳՈՒԹՅՈՒՆ

Ա. Փ. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

1907—1912

Ս. Փրկչեան Աղդային Հիւանդանոցը, որ իրը հայ աղջին մարդասիրական ամենակարեւոր հաստատութիւնը, իրաւամբ իր վրայ հրաւիրած է ամէն դասակարգի աղդայնոց համակրանքն ու ձեռնտուութիւնը, և, չնորհիւ այս հոգածու վերաբերմտն, կրցած է կանգուն մեալ ո՞յնքան տարիների ի վիր՝ ընդարձակուելով ու կատարելադործուելով, չէր կրնար չդրաւել նաև խնամուտ ջանքերը բոլոր այն մարմիններուն որոնք իր գործերը յանձանձելու պաշտանին կոչուած են: Բոլոր հոգաբարձութիւնները որ իրարու յաջորդած են, իրենց կարգին, այս կամ այն չափով, աշխատած են միշտ աւելի եւ բարելաւելու Աղջին Ծան վիճակը, ամոքելու ամէն կարգի պատսպարեալ-ներու տառապանքը:

Ճիշդ է թէ յաճախ աննպաստ պայ մաններ հկած են դժուարացնելու Հոգաբարձութեանց գործը, բայց յարատեւ ու անվաստ ջանքեր յաղթած են ամէն դժուարութեան:

Ճշմարտութեան հակառակ շարժած չպիտի ըլլայինք, երբ ըսէինք թէ այն պարագաներն ու պայմանները որոնց մէջ իրենց պաշտօն կիրարկեցին վերջին չլիւանի Հոգաբարձութիւնները, այլապէս աննպաստ եղան Հաստատութեան համար, որով և մեր վրայ ինկած աշխատառութեան բաժինը այլապէս ծանր եղաւ: Յայտնի է թէ, չնորհ հիւ Օսմանեան Սահմանադրութեան հռչակման, երբ Աղջը կրցաւ իր բազմազան ցաւերն ու վէրքերը հրապարակային զբաղման առարկայ ընել, և ընդհանուր ուշադրութիւնը մեծ իրաւամբ դարձած էր Մայր-Հայրենիքն հասնող տառապագին աղաղակներուն, Աղդային Հիւանդանոցը թուեցաւ թէ պահ մը դադրեցաւ իր գոյութիւնը զգալի ընելէ՝ աւելի մեծ ցաւերու մէջ, մանաւանդ երբ 1909ին տեղի կ'ունենար կիլիկիան ահաւոր ու աղետայի կոտորածը, որ անտարակոյս սգակիր աղջին միտքն ու հոգին առ ինքն պիտի գրաւ էր: Այս այսպէս ըլլալով հանդերձ, միւս



Հաստատութեան Ա. Փ. Եկեղեցին

կողմէ, այս դժբախտութեանց, ինչպէս և հազորդակցութեանց դիւրութեան և ան-  
նպաստ ու նպաստաւոր պարագաներու հետեւանքով, հաստատութեանս պատապար-  
եալներու թիւը կը բագմանար, անոր բեռը կը ծանրանար: Այս պայմաններուն մէջ,  
սովորականէն աւելի ճիգերու կը կարօտէին Սահմանադրութեանէն ետքի Հոգաբարձու-  
թիւնները՝ ապահովեցու համար գոյութեան միջոցները Հիւանդանոցին:

Այսպէս այ եղաւ և Եւ այսօր, Հոգաբարձութիւնս, բաւ համարելով իր պաշ-  
տօնավարութիւնը, հարկ կը համարի ներկայ անզեկազրով իր պաշտօնին համարա-  
տուութիւնը ընկել, կցելով անոր իր անմիջական նախորդներու գործունէութեան  
պատկերն ալ, քանի որ վերջին 6-7 տարուան միջոցին ուրիշ տեղեկագիր չէ հրատա-  
րակուած:

Այս Հոգաբարձութիւնը որ կը պաշտօնավարէր 1906 տարւոյ Տեղեկազրին  
պատրաստութեան ասեն, և որ կազմուած էր Պատրիկ Կիւլպէնկեան, Դրիգոր Էվ-  
րէնեան, Յարութիւն Ապահուան, Ա. Գարամանեան, Պետրոս Խորանանձեան, Տիգրան  
Մանուկեան, Տոքթ. Նազարեան և Տոքթ. Վ. Թորգոմինան էքէնտիներէ, Ազգ.  
Կեղը. Վարչութեան կը մատուցանէր 1907 Մայիս 10 թուակիր իր հրաժարա-  
կանը, յայտարարելով թէ «Ազգ. Վարչութեան վերակազմութեամբը հասած է մամա-  
նակը որ Հիւանդանոցն ալ ունենայ իր վերակազմեալ Հոգաբարձութիւնը»: Ասիէ զատ,  
Հոգաբարձութեան յարգոյ անդամները մէջ կը բերէին իրենց բազմազարդ վիճակը,  
և իրենցմէ ոմանց 1895 Փետրուար 13է ի վեր ունեցած երկարամեայ պաշտօնավա-  
րութիւնը:

Ազգ. Կեղը. Վարչութեան Քաղաքական Ժողովը ընդունելով վերոյիշեալ հրա-  
ժարականը, 1907 Օգոստոս Տին Կ'ընարէ նոր Հոգաբարձութիւն մը՝ հետեւեալ անձ-  
նաւորութիւններէ. — Յարութիւն էֆ. Ապահուան, Տոքթ. Տիգրան պէէյ Անէմնան,  
Արսէն էֆ. Արսէնեան, Արշակ էֆ. Գարակէօպեան, Գրիգոր էֆ. Էվրէնեան, Տիգրան  
պէէյ Կիւմիւշէրտան, Տիգրան էֆ. Մանուկեան, Մարթէն էֆ. Յակոբեան և Տոքթ.  
Սիմոն էֆ. Սեղբոսեան:

Այս նորընափր Հոգաբարձութիւնը 1907 Օգոստոս 10ին իր առաջին նիստը  
կազմելով Կ'ընարէ՝ իր գիւմանը: Հոգաբարձութիւնը իր պայտօնի անցած օրէն  
ինքըինքը կը գանէ կացութեան մը հանդէպ, որ պարզուած է սատրւել գըր-  
ուած տեղեկագրին մէջ: Այդ կացութեան մաս կը կադմէ բաւական կարեւոր պարտք  
մը: Արդէն 1906 տարւոյ մատակարարութեան հաշուետուութեան մէջ ցայց կը արր-  
ուի ատիկա՝ այն է 2000 ոսկոյ պարաքի առաւելութիւն մը, որ սակայն ար-  
դիւնք է ո՛չ մէ մատակարարութեան հաշուէն ո և է բացի, այլ լոկ վերջին շինութեանց  
առթիւ տեղի ունեցած շատ մը ներքին փոփոխութիւններէ, պարտէզի և հրազդակի  
յարդարումներէ և սալայատակներու շինութեանէ, խոհանոցի նորոգութեանէ, մեքենայի  
տեղույ շինութեանէ, ելն. առաջ եկած բացառիկ ծախքերու:

Հոգաբարձութիւնը պաշտօնի ձեռնարկելով հանդերձ, պէտք կը տեսնէ կարգ  
մը թելագրութիւններ ընկելու Ազգ. Կեղը. Վարչութեան 1907 Մեպտ. 7 թուակիր վե-  
րոյիշեալ տեղեկագրովը որ ահաւասիկ:

## Ամենապահի

Մրգազան Պատրիարք Հայր

Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Ս. Գրիշեան Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան նորմենիր անդամն խրմբովին կուզանք խոնարհաբար մեր խորին ընորհակալութիւններ յարենի առ Բարձր. Մրգազնութիւնն եւ առ Պատկ. Ժողովը, այն վասանութեան նամար որով բարեհանութիւնն ունեցաք մեզ յանձնուլ Ս. Փ. Հիւանդանոցի նման բազմանիւղ Հասանութեան մը Վարչութիւնն:

Բարձր Մրգազնութիւնն եւ Պատկ. Ժողովը կրնակ վասան ըլլալ քէ մերովսանն ջանադիր պիտի զնույինք զրութեան սոյն յարկին բարեկարգութեան եւ միանգաման պատսպարելոց վիճակին բարուժման :

Սոյն տեսութեամբ Հոգաբարձութիւնն զործի ձեռնարկելով մանրակրկիս նննութեան ենթարկած է Հասանութեանն ընդհանուր վիճակն՝ այսինքն պատսպարելոց բիւն ու դրամական կացութիւնն : Յաւ է մեզ յայսնել քէ առաջնոյն բիւն չափազանցեալ զանք բաղդատամամբ Հիւանդանոցի տամադրելի տեղույն՝ որ խիս խնողեալ է, եւ երկրորդն ոչ միայն դատարկ սնուուկ մը, այլ նաև պատկառելի զումարով բեռնաւորեալ պարտուց տակ ննեալ վիճակ մը ներկայացուցած է, ինչ որ Հոգաբարձութեանն ուժն ջատելով Հասանութեանն բարուր մասակարարութեան արգելիք կ'ըլլայ: Սոյն պարտուց վրայ պէտք է յաւելով նաև յառաջիկայ ձերան եղանակի անհրաժեշտ պիտոյից հայրայրումն եւ երկու յարկաբաժիններու կահաւորման ամենակարեւոր յինդիրն, որն որ խամ տարիներէ ՚ի վեր կանխատեսեալ եւ մեծ զնոնութիւններով ՚ի զլուկ կենելի յետոյ այսօն դատարկ կը մնայ, որ ոչ միայն պատուաբեր չէ, այլ նաև ազգային մեն մի անհատին նոյնին վրայ ծանրացած բեռ մէ:

Հոգաբարձութիւնն յառաջ տանելով ՚ի նննութիւնները, տեսաւ որ տարիներու բալորմամբ եւ արդի ժամանակին պահանջմամբ Հասանութեանն զործերն ու պէտեն այն աստիճանի ընդարձակուած ու բազմացած են որ Հոգաբարձութեանն անդամն որչափ ալ բարի տամադրութիւններ ունենան եւ խինմօրէն աշխատին, անկարելի է որ կարենան հասցնել այն կէտին որ ամեն բան բայ կարելույ կանոնաւոր վիճակ մը ունենայ, ուստի Վարչական եղանակը բարեփոխելով բարեկարգելուն պէտք խիս զգալի եւ պարտաւորիչ զանք, ինչ որ մեր նախորդն եւս զայն զգալով Հոգաբարձութեանն կազմակերպութեան ատենին բողոք են, իրենց բոլոր ոյժը տալով զանազան բարւորմանց եւ սինութեանց զործերն ՚ի զլուխ հանելու :

Ուստի Հոգաբարձութեանն վրայ ծանրացած ննեալ վեց կենսական յինդիրներն զայ նաև Մրգանոցի վարչական, արհեստական, մատակարարական եւ սննդական յինդիրն որ կը ծանրաթենէ Հոգաբարձութեանն զբաղմանց շարքը :

Մրգանոցի Վարչութիւնը կանոնաւոր ընթացքի մը մէջ շարումակել կատենալու համար առօրեայ նսկողութեան առարկայ ընելու անհրաժեշտ պէտք կայ, որուն անկարելի է հասնիլ հակառակ բայու մեր բարի կամեցողութեան. ննեալաբար կ'առաջարկենք որ Պատկ. Ժողովը ՚ի բարեկարգութիւն նորոգ կառուցանելի Մրգանոցին, բարեհանիք արդի Մրգանոցի Վարչութիւնը յանձնել արդէն կազմուած Մրգանոցի Մասնախումբին, պայմանաւ որ Հոգաբարձութիւնն ամսական (50) յիսուն ոսկույ որու

գումար մը վճարելով հանդեռն, որուեալ բուով որբերու սենդեան, հագուստի, լուացի, շնորհման եւ լուսաւորութեան հողն ալ ստանձնէ եւ անօնցմէ դուրս ուսումնական, արհեստական եւ վարչական ամեն պատասխանատութենք զերծ մնայ մինչ ի լուսն Արքանցի ժինութեան, այնպէս որ սոյն գրութեամբ Հոգաբարձութեանս բեռն թիեւցնելով, միջոց եւ ժամանակ մնայ մնացեալ զործոց կարգադրութեամբ զբաղելու : Խևկ վերոյիշեալ վեց կենսական խնդիրներն նետեւեալք են,

1. Պատասխանոց խաղակալ վհանակը առողջապահական եւ եղեւմտական տեսակետով .
2. Դիմուալ պարտու մասամբ վհարման եւ վերշնական յարդարման խնդիրը որ կը մնի Հաստատութեան մատակարարութեան վրայ .
3. Զմրան անհրաժեշտ պիտոյից հայրայրման եւ բոշակներու վհարման խնդիր .
4. Երկու յարկամատիններու կահաւորման խնդիրը որ աւագ կարեւորութիւն ունի .
5. Հաստատութեան եղեւմումից հաւասարաշղութեան խնդիր .
6. Վարչական բարեկորդման եւ կարմակերպութեան խնդիր .

Առաջին խնդրոյն համար պատօն յանձնեցինք մեր թիւիկ պատօնակցաց որ արհեստական տեսակետով ուսումնագիրեն, որոց տուած գրաւոր եւ բերանացի դիտողութիւնը պատապարելոց խնդիրալ վիճակը խիս անգործացուցիչ եւ միանգամայն զանազան արգարացի պատճառաբանութեամբ վտանգաւոր ըլլալն կը հաստատն. ուստի նոյն թիւերու սահմանափակումով անհրաժեշտ դատելով նորա փուրանակի զործադրութիւնն կը պահանջնեն, որուն վրայ Հոգաբարձութիւնս եւս համոզում գոյացնելով համամտութեամբ հրահանց տուալ ներքին Տեսօնութեան որպեսզի խիս բննութեամբ Հաստատութեանս բոլոր նիւղերու մէջ, իրենց տեսքոր դրկուլին կարենի եղողներն անմիջապէս արձակի եւ մնացեալներուն որու թիւը ներկայացնէ որպեսզի անձամբ բննութիւն մ եւս կատակելով պատապարելոց վերշնական թիւն որուենք, այս պատճառու է որ Արքանց ընդունելութեան համար եղած նորոյ դիմումներուն մերժողական պատասխան տալու հարկադրեալ եմ :

Երկրորդ խնդրոյն զալով, Հոգաբարձութիւնս նետազօնց տեղի ունեցած պարտու զործութեան պատճառներն եւ ուսկից յառաջ եկած ըլլալն, որով յանցեցաւ նետեւեալ եղակացութեան ,

77567 ¼	Պ.ր.с.	Մինչ ցիւց 1905 տարւոյ մատակարարութեան զոյացեալ բացը
27000	»	Կահեկ գումար մը ըլլալով մատակարարութեան հաշույն անցած եւ 1906ի զործանութեանց մէջ ուղղուած .
40000	»	Որպանցի համար տրուած դրամազուխ .
243000	»	1906ի շինութեանց առիթ եղած տարտափոր ծախս .
400000	»	Միջինքն ի՛ վէր շարունակաբար պարտու գումարին միջին թիւը որ ամեն տարւոյ հաշուեցոյցին մէջ տեսնուած է .
787567 ½	Պ.ր.с.	1906 դիկտմբ. 31ին Հաստատութեան պարտը .
137567 ½	»	որ ներկայ տարւոյ վեց ամսուած շշանին մէջ զանազան հասոյրներով վհարեալ ըլլալուն երկ գեղեցիկ
650000	Պ.ր.с.	կը մնայ .
400000	»	Զմրան զանազան պիտոյից հայրայրման .
250000	»	Երկու յարկեռու կահաւորման .
1000000	»	Անհասմիկ Հոգաբարձութիւնս 10000 ուկոյ պարտի մը առջեւ կը գտնուի: Երկ կահաւորման համար անհրաժեշտ 2500 ուկոյ հայրայրումն

մեր վրայ առնունի՞ զանազան հանգանակուրեամբ հոգալու պայմանաւ, եւ մնացեալ 7500 ոսկին 4000 ոսկի պարտի երե մեայուն պարտ քողում, ինչպէս կը շարունակուի ՚ի վաղուց անի, 3500 ոսկոյ ամիջական պէտի մը առջեւ կը զնուի Հոգաբարձութիւն, զո՞ր անմիջապէս գտնելու միջոցներէ զուրկ է : Աւսի ներկայիւս բախանակօն կը խնդրեամբ Ձեր բարձր Մրգագնուրեան եւ Պատկ. Ժողովներ որ ազգային ո՛ եւ է հասատուրեան մը պատրասի դրամներէն տոկոսաւոր կամ անտոկոս, փոխատուրիւն մը ըլլայ Հիւանդանոցիս սեռուկին, որպէսզի անմիջական վճարումներն ընելով կարող ըլլամբ շարունակել մեր պատօնի :

Եկեւմուտի հաւասարակուրեան խնդրիր որ աւազ կարեւորուրիւն ունի եւ որ մեծ մահոցուրիւն կը պատճառէ մեզ, մեր ընկերակիցներէն երեւ հոգիկ բաղկացեալ մասնախմբի մը նկատաման յանձնած եմք որ կանոնաւորապէս կ'զբաղի զործ լրջութիւն ուսումնասիրելու եւ մինչեւ 15 որ իւր տեղեկացիրն բերելու սակայն իր նախազգուուրիւն յարանուն պարտուց առաջն առնելու համար հարկ անհրաժեշտ է պատրապարելոց րիւր սահմանափակի, որպէսզի ծախուց անսահման եւ անորու ընթացքը պատճառ չըլլայ պարտուց յաւելման եւ անելանելի կացուրեան մեջ դնելու Հասատուրիւն: Առ այս մեր հասուրից նետ բաղդատմամբ պատսպարելոց որու րիւր մը սահմանելու հարկին մեջ կը զնուինք, որպէսզի կարեւոր խնարդուրեամբ նախ կարող ըլլամբ պարտ ընելէ զագախի, եւ նեսզնետէ միջոցներ զնել րիւր ծախուց կրնամամբ եւ րիւր հասուրից յաւելմամբ պարտերն վնարելու եւ աղետալի նետեանաց վերջ տալու, ինչ որ ո՛չ յուսահատական եւ ո՛չ ալ անկարելի է, վասնզի մեկ երկու տարի ՚ի վեր տեղի ունեցած հանգանակուրեանց կարեւոր զումարներն շինուրեանց եւ եկեղեցւոյ զարդարանաց յատկացուած են, եւ երե Ձեր բարձր Մրգագնուրիւնն Հիւանդանոցիս արդի խկական վիճակը ազգին ներկայացնելու բարենանուրիւնն ունենայ, իլայու եմք որ ամեն դասակարգի ազգանոց սրբն մեջ սոյն զրուրեան յարկին նկատամբ արմատազած մեր ու գուրզուրամբն կամ համանակամիջոցի մը մեջ վնարել պիտի տայ մեզ դիբեալ պարտուց վերջին դանիլը :

Ինչպէս որ վերեւ բացարեցինք երբեք յուսահատական վիճակ մը չեմ գտնեմ առաջարկեալ բարեփոխումներն զրծադրելով, իսկ հակառակ պարագային անելանելի կացուրեան մը մասնուելուն ալ երբեք չեմք տարակուսիր, եւ մեզ համար փափառելի չէ առանց համոզման մեր խնդիրն դեմ մուրին մեջ ընթանալ մեր զրծանուրիւններն չի սահմանափակելով: Վհասելու ալ պատճառ չեմք տեսներ, վասնզի Հիւանդանոցիս ընդհանուր վիճակը ամեն տարի զգայի առաջերարկիւն ցոյց կուտայ, ինչպէս որ պիտի տեղեկանակ ներկայ հաւուեցոյցի, եւ տարու տարի կը բազմանայ կասկեալ զումարներու րիւր, բեպէս եւ սոյն շրջաններու մեջ ալ բատկան նույրատուրիւններ եղած են, սակայն ասոնք Հիւանդանոցի բարեգարդուրեան եւ տարբեր պականներ լրացնելու ծառայելով մատակարարուրեան օգակար չեն եղած, ինչպէս են եկեղեցական անօրենք, սպասներ, զանազան տեսակ իրենքներ, երկու եւալլի :

Քաջայոյն եմք, Մրգագնու Տեր, որ մեր սոյն խնարեն առաջարկի անմիջական կարեւորուրեամբ լրջութիւն նկատուրեան առնելով պիտի բարենանիք խնիս մօս օւերու մեջ զնացուցիչ պատասխանի մը արժանացնել զմեզ, առանց որոյ Հասատուրեանս կացուրիւնը վնասեցուցիչ վիճակի մը պիտի ենթարկ զմեզ որոյ հանդեպ մեր պարտականուրիւնն խննիւուկի չիւանձնալ կատարելու հարկին մեջ զնուելով չիւի կարողանամբ շարունակել մեզ վասահամար պատօնի :

Մոտչելով ՚ի համբոյր Ս. Աջոյ Ձեր բարձր Մրգագնուրեան

Մատուց ամենախօնար որդիք

Սուրագրութիւնից

Հոգաբարձուրեան բոլոր անդամոց



Արքայանութիւն պահպանական տունը

Ինչպէս կ'երեւայ, այս ատենի Հոգաբարձութիւնը արդէն ուրուագծած է իր գործունէութեան համար ծրագիր մը, բայց առանց զայն գործադրելու ժամանակ ունենալու, և տաճամանաեայ պաշտօնավարութենէ մը ետքը, երբ Օսմ. Սահմանադրութեան հաջակմամբ և Աղդ. Սահմանադրութեան վերահաստամամբ կը վերակազմուին Աղդ. Վարչութիւնը, Տեսուչ Խորհուրդները, Հոգաբարձութիւնները և Խոհամակալութիւնները, Աղդ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն ալ հարկ կը համարի գործէ քաշուելու, և կուտայ 908 Յուլիս 22 թուակիր իր հրաժարականը՝ մինչեւ յաջորդին ընտրութիւնը իր պաշտօնը շարունակելու պայմանով։

Այդ թուականէն սկսեալ շուրջ հինգ ամիս ետքը՝ 1909 Յունուարին է որ կը կազմուի Հիւանդանոցին համար նոր Հոգաբարձութիւն մը, հետեւեալ անձնաւորութիւններէ։ —

Տեսքը՝ Եղան Ղուկասեան, Տոքթ. Ա. Պահճէպանեան, Տոքթ Մ. Շերպէթ-ձեան, Տոքթ. Կ. Խանճեան, Միսաք Նարլըեան, Մ. Ինճէեան, Յ. Արիկեան, Տոքթ. Դ. Ճելալ և Լ. Յովհաննէսեան, որոնցմէ Տոքթ. Պահճէպանեան, Տոքթ. Շերպէթ-ձեան, Մ. Ինճէեան, Յ. Արիկեան և Լ. Յովհաննէսեան էֆէստիներու հրաժարումով, ասոնց յաջորդ կ'ընտրուին Տոքթ. Ալէքսանդր պէյս Արագեան, Կարապետ Խանճեան, Միհրան Խանճեան, Համբարձում Մէնդիլճեան, Մ. Նարկիլէճեան, Բ. Աւեսիսեան և Տոքթ. Ե. Արագեան էֆ. ները։

Ահա այս նորակազմը, և յաջորդաբար մասնակի փոխիսութիւններու ենթարկուող Հոգաբարձութիւնն էր որ ձեռնարկիելով իր պաշտօնին, իր առջեւ գտաւ մատակարարական գժուարութիւններ՝ ինչպէս ըսինք՝ ա'լլապէս ծանր։ Պարզած ենք քիչ մը վերեւ թէ՝ Օսմ. Սահմանադրութեան հաջակումէն ասզին, երբ ազգային գանազան ազէտներ և բազմազան պէտքեր երեւան նկան, հանրութեան՝ Հիւանդանոցի նկատմամբ ունեցած վերաբերումն ալ նուազեցաւ, քանի որ շարք մը պատահական դէպքեր և պարագաներ՝ ինչպէս գաղթականներ, որքեր, ջարդեր, մասնակի սովեր, այրիներու խնամակալութիւններ՝ գաւառացի ուսանողներ, ևայն. բնականաբար հանրային օժանդակութիւնը կը հրաիրէին իրենց վրայ։ Այս պատճառով ալ, Հիւանդանոցի մատակարարութեան արդէն իսկ գժուարին գործը ա'լ աւելի գժուարացաւ։ Նոր պարտքեր ընելու անկարութիւնը, կանխիկ զնումներու համար՝ հասոյթներու նուազութեան հետեւանքով կրուած զ մուարութիւնները, պահանջաւէրերու գաւառական միջոցներու դիմելու սպասնակիքներու ու նոյն իսկ կատարուած զիմումները կը ստեղծէին այսպիսի անձկալիր կացութիւն մը, որուն համար Հոգաբարձութիւնը հարկադրուեցաւ հանրային կոչեր, Պատրիարքարանի ու օրուան Վարչութեան զիմումներ և Պատրիարքարանի կեցը։ Սնտուկն մատնակի փոխառութիւններ ընել։ Բոլոր այս գժուարութեանց հակառակ, սակայն, Հոգաբարձութիւնը յաջողած է, մնեցո՞ղութիւններով և զանազան խնայողութիւններով, ըստ կարելոյն նուազագոյն բացերով փակել իր մատակարարութեան հաշիւնները, լաւագոյն առիթներու սպասելով միշտ՝ հաւասարակիու վիճակի մը մէջ դնելու համար Հաստատութեան մատակարարական գործը։

Բայտ որում այս կացութիւնը առաջ կուգար պատապարելոց թուոյն աստիճանաբար ստուարամալուն և հասոյթներու նուազելուն հետեւանոք, թէ՛ լրագրական ծանուցումներով և թէ՛ Աղդ. Պատրիարքարանի միջոցով ազգարարուեցաւ գաւառի Առաջնորդութիւններուն, թաղ. Խորհուրդներուն և այլ պաշտօնական մարմիններու

որպէսզի ժամանակի մը համար դադրեցնեն իրենց դիմումները՝ նոր պատապարեալներու ընդունելութեան համար, բայց միշտ անօգուտ:

Եթե եւեկի դիմութիւնները, ճամբաններու բացուիլը աւելի ևս մղում տուած էին ամենքորեայ դիմումներու: Ամէն օր, ամէն ժամ, հետաւոր տեղերէ ամէն տեսակ հիւանդներու, անկեալներու, ծիրերու և յիմարներու խումբեր Պողիս հաննելով, կամ ուղղակի Հիւանդնոցի, կամ՝ Գրասենեակին և կամ Պատրիարքարանի դուռը ափ կ'առնէին, և Պատրիարքարանը հակառակ իր շրջաբերականներուն, և համզուած ըլլարով հանդերձ թէ Հիւանդնոցի ոչ չէնքին տարողութիւնը և ոչ ալ նիւթական միջոցները կը ներէին ապաստան չնորհել ամէն դիմողի, կը հարկադրուէր յանձնարարուել աննոց ընդունելութիւնը: Պատրիարքարանի յանձնարարութեանց վրայ կ'աւել-նային նաև յանձնարարութիւնները Գաւառ: առաջնորդուներու, Թագ- Խօրհրդոց, Ազգային ամառարութեան մասներու, և այլ պաշտօնական մարմնոց, որոնք կը կարծէին թէ Հիւանդանոցին շէքը անասանման տարողութիւն ունի, և Անոր մնտաւէին մէջ առատ դրամ կը դժոխուի միջաւ, պատուարութիւն և խնումք տարու համար բոլոր յանձնարարեալ ազգոյնոց: Հոգաբարձութիւնն սակայն իր միջոցներուն ներած չափով կ'աշխատէր զոհացում տալ բոլոր այդ դիմուններուն, զգուշանալով մասակարարութիւնը աւելի դժուարութեանց մասնելէ: և նոր պարտքեր դիմելէ:

1910 Մայիս 10ին Հոգաբարձութեան երկու պահաս անդամներուն տեղ անդամակից կը նշանակուին Օգսէն Քիւրքնեան և Ներսէս Շանսեան էֆ ները, և կ'ընտրուին ու կը վաւերացուին, որով Հոգաբարձութիւնը կ'ամբողջանայ հատուեալ կիրապով: —

Տոքթ. Եր. Արագեան, Յովսէփ Արթինեան. Բարսեղ Ա. ետիսեան, Տոքթ. Կարսպետ Խանճեան, Եշան Դուկասեան, Կարսպետ Խանճեան, Մաքսուտ Նարեկէլէնեան, Օգսէն Քիւրքնեան և Ներսէս Շանսեան էֆ ները:

Հոգաբարձութիւնը Աղդ. Կեղրոնական Վարչութեան մասուցած է տեղեկագիր մը, զոր աւելորդ չնոր համարեր սատրու ներկայացնելու, գալարափար մը տուած ըլլարու համար իր գործունէութեան և իր պաշտօնավարութեան միջոցին Հիւանդանոցի ու յարակից Հաստատութեանց վիճակի մասին: —

#### 4 Անպեմբեր 1910

##### Ամենայաժի Ս. Պատրիարք Հայր

Նախագահ Պատկ. Քաղաք. Ժողովոյ

Ազգ. Կեդր. Վարչութեան

Զեր Բարձր Սրբազնութիւնը Օգոստոս 9 թուակիր և 448 համար պաշտօնազրով մը կը հրաւիրէր Հոգաբարձութիւն՝ Աղդ. Կեդր. Վարչութեան մասուցանել իր պաշտօնավարութեան կանոնական համարաստուութիւնը:

Հոգաբարձութիւն իր պաշտօնին ձեռնարկած է 1909 տարւոյ Յունուար 16ին և յաջորդական 130 նիստերու մէջ զբաղած է Հիւանդանոցի Վարչական և մատակարարական գործերով:

Նախագէտ ընտրուած անդամներէն Տեսարք Արիկեան Յովսէփիմ, Խնձեան Մշկը-ափէ, Ճէլալեան Տօքթ. Քրիզոր, Շէրպէթեան Տօքթ. Մաքսուտ, Պահճէպամնեան Տօքթ.

Աշուա հետզհետէ հրաժարած ըլլայլով, անոնց տեղ Պատկ. Քաղաք. Ժողովոյ կողմէ ընտրուած են Տեսարք՝ Արտապեան Տաքթ. Երևանից, Արթինեան Յովսէփ. Աւետիսիսեան Բարսեղ, Մանճեան Կարապետ, Նարկիցճեան Մազսուտ, Քիւրքճեան Օզոէն և Շահան- եան Ներսէս, որոնք ցարդ կը պաշտօնավարեն Տեսարք Մանճեան Տաքթ. Կարապետ և Դուկասեան Նշանի հետ :

Անդստին իր պաշտօնավարութեան առաջին օրէն Հոգաբարձութիւնս դիտեց թէ Հիւանդանոցի մատակարարութեան գործը կարի զժուարացած է, մէկ կողմէն Պետական հացի և մսի նպաստին և միւս կողմէ Ազգ. Նույիրատու թիւնանց զգալի կեր- պով նուազելուն հետեւանքով : Եղանգէս նախորդ մատակարարութիւնէ դոյցած տո- կուատոր և անտոկաս Լիբր. Օսմ. 7000ի մաս պարագ մը կայ, զոր կարելի չէ հատու- ցանել Հիւանդանոցին հասոյթի սովորական միջոցներովը :

Իրաց այս ծանր վիճակը բաւական զբաղեցուցած է Հոգաբարձութիւնս որ, իրը դորման այդ անել կացութեան, ծրագրած է միջոցներ, որոնցմէ մէկ քանին, —ինչպէս՝ Լիբր. Օսմ. 15000ի վիճակահանութիւնը մը կազմութիւնը, տարեկան սովորա- կան գարձած նուազահանդէսի մը կազմակերպութիւնը, գաւառներու և արտսասահ- մանի, ինչպէս և մայրաքաղաքիս ազգայնոց միջն. ի նպաստ Հիւանդանոցի հանգանա- կութեան մը ձեռնարկութիւնը ևայլն — արդէն ենթարկուած են Պատկ. Քաղաք. Ժողովոյ զովոյ նկատաւաման, միւս կողմանէ Հոգաբարձութիւնս որոշած և զործադրած է կարդ մը ինայողութիւններ պաշտօնէից թւոյն և ամսաթուակոց վրայ, և ջանացած է ըստ կարելոյն սահմանափակել Հիւանդանոցի պատսպարելոց թիւը : Այս վերջին պարա- գայն սոկայն գժուարութեանց բազխած է, վանդի մեր ազգայնոց մէջ զրեթէ ար- մատացած է այս զաղափարը որուն համեմատ ամէն ազգային անհատ որ նիւթական լայն միջոց չունի, իրաւունք ունի ձրի դարման և կամ պատսպարութիւն գանեկու Ազգին Տանը մէջ. միւս կողմէ Ազգ. պաշտօնական մարմինները առանց նկատողու- թեան առնելու Հոգաբարձութեանս պարբերաբար կրինած ազգարարութիւնները, ձրի գարմանումի կամ պատսպարութեան առատ յանձնարարականներ կուտան իրենց դի- մոր ազգայնոց, չի փորձելով տեղական միջոցներով գոհացում տալ անոնց խնդրանքին և յանձնի զանց առնելով իսկ քննել յանձնարարական խնդրով ազգայնոց կամ անոնց պարագաներուն նիւթական վիճակը, իրը թէ միակ Հիւանդանոց մը և անոր նիւթա- կան միջոցները բաւական ըլլային ընդունելու անխտիր դարմանի կամ պատսպարու- թեան պէտք ունեցող ամէն ազգային կողմէն:

Այս իսկ է պատմառը որ այսօր Հիւանդանոցի պատսպարելոց և հիւանդաց մէջ կը գտնուին այնափիններ, որոնք կարոք են վճարք մը լնել՝ և ձրի կամ զրեթէ ձրի արձանագրուած և ընդունուած են, պաշտօնական մարմիններէ և կամ անձերէ յանձ- նարարուած ըլլալով : Կամ նաև այնպիսիններ որոնք անմիջական գարմանի կարոտ ըլլ- լալով՝ Հիւանդանոց զրկուած են, պարզապէս անոնց արուելիք խնամքի ձանձրոյթէն աղատ մնալու համար :

Այս տեսակները Հիւանդանոցի մնայուն բնակիչները եղած են :

Որբանոցի պատսպարելոց մէջ ևս կամ տակաւին մաս մը աղաք, որոնք բա- ցարձակ որբ չեն և ունին յայտնի պաշտպան կամ հայր և կամ մայր, և որոնք սա- կայն հաստատուած են Որբանոցին մէջ, յանձնարարութեամբ պաշտօնական մարմնոց և անձանց :

Ամէն պարագայի մէջ սակայն Հոգաբարձութիւնս պարտաւոր էր ձեռնարկել

պատսպարելոց թւոյն սահմանափակումին, առողջապահութեան և մատակարարական կրկին տեսակէտներով, նկատելով որ չէնքն իսկ անբաւական է պարունակելու աւելի քան 500 պատսպարեալ, եթէ չուզուի զանց տանել առողջապահութեան պայմանները:

Հոգաբարձութեանս անդամ Տօքթ. Խանճեան էֆ. ի տեղեկագրոյն համեմատ, որ պատրաստած էր որոշմամբ Հոգաբարձութեանս, Յակոբեան, Ռևենեան և Կիւլպինեկեան յարկաբաժիններուն մէջ 99 հիւանդ պէտք է գործածնել, 104 անկողիններէն նը բացառիկ պարագաներու համար պարապ պահելով: Արանց Հիւանդարանի հին չէնքը պէտք է պարունակէ 40 անկողին՝ փոխանակ 50ի, ինչպէս կայ այժմ: Կանանց Հիւանդարանի հին չէնքը նոյնպէս պէտք է ունենայ միայն 40 անկողին, մինչդեռ այժմ կայ 60 :

Արանց Հիւանդարանին մէջ 50 անկողին կրնայ զետեղուիլ՝ փոխանակ 100ի, ինչպէս է ներկայիս: Հիւծախտաւոր ու յիմար արանց համար 47 անկողին կայ, մինչ տեղը կը բաւէ 42 անկողին: Կանանց Յիմարանոցի գետնայարկը կայ 35 անկողին որ ամբողջին պէտք է վերցնել տեղուոյն անյարմարութեան պատճառաւ, իսկ միջնաշրջի 75 անկողինները պէտք է զեղչել առ առաւելն 40ի՝ տեղուոյն տարրողութեանը համեմատ: Արանց Մերանոցի անկողինները 49էն վերածել 30ի, ինչպէս և կանանց Մերանոցի անկողինները 30էն իջեցնել 20ի:

Որբերուն համար եւս տեղ կայ Հիւանդանոցի շրջափակին մէջ միայն 60 որոշուիլ, և Ս. Յակոբայ Որբանոցին մէջ 80 որբի, հետեւարար որպէսիլ Հիւանդանոցը իր նպատակին ծոռայէ, առողջապահիկ կանոններու կիրառութեամբ, Հաստատութեան ամբողջ չէնքին զանազան բաժանումներուն մէջ պէտք է գտնուին՝ ի դարձանում և ՚ի պատսպարութիւն զրէթէ 180 հիւանդ, 190 յիմար և ապուշ երկու սեռէ, 50 այլ և կին ծեր անկեալ, 60 որբուհի և Ս. Յակոբայ Որբանոցին մէջ 80 որբ, ընդունենը 560 հոգի բարձրագոյն թիւ:

Սակայն երթեւեկութեանց զիւրութեան հետեւանոք մայրաքաղաքս դիմող գաւառացի ազգայնոց անտեսական տիտոր վիճակին պատճառաւ, ցարդ կարկի չէ եղած հիւանդաց և պատսպարելոց թիւը ըստ այնին զեղչել, և հետեւապէս անդորդադրեկի մնացած է Պատկ. Քաջար. Ժողովոյ յանձնարարութիւնը, որուն համեմատ պէտք էր Հիւանդանոցի մատակարարութեան ծախքերը հաւասարեցնել իր հասոյթներուն:

Հոգաբարձութեանս իր պաշտօնին ձեռանարկած թուականին, 1909 Յունուար 16ին, Հիւանդանոցին մէջ կային 957 անձինք, հետեւեալ բաժանմամբ:

Հիւանդ	197
Յիմար	275
Մեր	114
Որբ	233
Պաշտօնեայ	138
Ընդհ. քիւ	957

1909 Յունուար 16ին պատրաստ 957 անձանց վրայ մինչև 1910 Օգոստոս 31 Հիւանդանոց մատած են 3645 անձինք, որով համագումարը եղած է 4602 անձինք: Այդ ժամանակամիջոցին մէջ բժշկուելով կամ բարուքելով Հիւանդանոցէն մնկնած են



Յակոբիան Յարկագաժին

3355 անձինք և մեռած են 496 անձինք, որով 1910 Օգոստոս 31ին Հիւանդանոցին  
մէջ պատսպարուած են 752 անձինք հիւեւեալ բաժանմամբ

Հիւանդից	144
Ցիւմարց	257
Ծերց	102
Որբից	436
Պաշօնեայց	113
Ընդհանուր	752
	անձինք:

Հիւանդանոցի ասթեկան ծախքը մօսաւորապէս 12000 ոսկի է. այս գումարին  
դէմ կալուածներէ, Թոշակներէ, Տոկոսէ, Վաղցիքէ, Մոմի, Օրացոյցի, Սրիակորի թուղ-  
թի և Լուցկիի վաճառութներէ կայ զրկեթէ 6000 ոսկւոյ հաստատոն հասոյթ մը, ո-  
րուն մէջն է հացի և մօմի Պետական նպաստին փոխարժէքը, միացեալ 6000 ոսկւոյ  
մօսա գումարը ձեռք պիտի բերուի պատահական հասոյթներէ, որպիսիք են Մաղկե-  
պսակի, Մաղկեփունջի, Ա. Եննդեան և Զատիկի շնորհաւորական այցելութեանց և այլ  
առիթներով եղած նուրիսառուութիւններ, շրջաբերուած գանձանակաց և պնակի հա-  
սոյթք, 'ի նպաստ Հիւանդանոցի կազմակերպեալ տարեկան հանդէսներ կամ հանդա-  
նակութիւններ ևայն:

Եւ որովհնեւու ծանօթ պատճառներով պատահական հասոյթները նուռազած են,  
909 տարւոյ մատակարարութիւնը ունեցած է 350 ոսկւոյ մօս բաց մը, որ և ապա-  
հացարեար շատ աւելի պիտի ըլլար, եթէ Հոգաբարձութիւնս ծախուց մէջ խնայողու-  
թիւններ և հիւանդաց ընդունելութեան կամ այցոց պատսպարութեան համար կարելի  
խստութիւններ ՚ի գործ դրած չըլլար: Յուսակի է սակայն որ, Պատկ. Քաջաք. Ժո-  
ղովոյ օմանդակութեամբ ներկայ տարուան մատակարարութիւնը բաց չունենայ:

Տարւոյ ընթացքին հեաւեւեալ փոփոխութիւնները տեղի ունեցած են Հիւան-  
դանոցի պաշտօնէութեան մէջ: Գրասենեակի տեսուչ Մագսուտ էֆ. Խիւտավէրտեանի  
հրամարմամբ նոյն պաշտօնին կոյուած է համարակալ Յովակիմ էֆ. Մանուէլեան, որուն  
յաջորդած է իրր քարաւազարհամարակալ Գրիգոր էֆ. Վանկեան, իսկ անհաւատա-  
րիմ արկղակալ Միհրան Գաստրանի պաշտօնը չնշաւելով արկղակուութիւնը յանձ-  
նուած է Տեսուչ Յովակիմ էֆ. ի:

Նոյնպէս Հիւանդանոցի Տնօրին Իորայէլ էֆ. Հայկազնի հրամարմամբ նոյն  
պաշտօնը յանձնուած է Սամաթիոյ ծանօթ աղջայիններէն Անուն էֆ. Ապահեանի և  
այս առթիւ չնշաւած է Դեր-Տնօրինի պաշտօնը. զոր կը վարէր Թովմաս էֆ. Գարա-  
գաչեան և որ հրամարած է նոյն պաշտօնին չնշաւած պատճառաւ:

Բժշկաբեաններուն մէջ փոփոխութիւններ կատարուած չեն. ըստ առաջնոյն ներ-  
քին հիւանդանութեանց բժշկապեան է Տօքթ. Խափիթեան էֆ. և վիրարուժապեան է  
Տօքթ. Մալխասեան էֆ. և պետ յիմարարոյն է Տօքթ. Պօղոսեան էֆէնստի: Օգնա-  
կան բժշկներու, հիւանդապահներու և այլ երկրորդական պաշտօնէից մէջ ալ հարկ  
եղած փոփոխութիւնները եղած են, զորս աւելորդ է յիշել:

Հոգաբարձութիւնս ուշացրութեան առած է նաև Հիւանդանոցի հասոյթի աղ-  
բարձուները: Էստայամ լուցկիի մինաշնորհը որ ցարդ շատ աննշան արդիւնք մը տուած  
էր և անցեալ տարի ալ բնաւ արդիւնք չէր տուած, Հոգաբարձութեան հակագոռնէն  
ներքեւ և փոխադարձաբար ընդունուած և փոխանակուած յատուկ պայմանագրութեամբ:

յանձնուեցաւ հայ յանձնառուի մը որ, տարեկան 40 Օամ. ոսկեոյ որոշ գումար մը պիտի վճարէ Հիւանդանոցի Սննուելին, եռամսեայ 10 Օամ. ոսկեոյ չորս կանքումճաւ բայլ. բաց ասափ եթէ խրաքանչիւր լուցկիի մնառուելին վրայ հիւանդանոցին համար որոշուած բաժինը տարեկան 40 ոսկեէն աւելի արդիւնք բերէ սպառումին աւելնաբազք — զի առաջնակարգ լուցկիի ի վաճառ պիտի հանուի բայն յաւելեալ արդիւնքն եւ պիտի յատկանայ Հիւանդանոցի մնառուելին, իսկ հակառակ պարագային յանձնառուած պարտաւոր է հասուցանել՝ տուանց ու է զեղչի և առարկութեան՝ որոշուած 40 ոսկեոյ գումարը:

Նոր կարգադրութիւն մը ևս եղած է Հիւանդանոցի սեփական սիկառի թղթին համար. Յանձնառուն Մարտիկ էֆ. Շիրինեան, երկու արարուան համար, նոր պարմանագրութեամբ մը պարտաւորուած է ամսական 5000 զրուշի որոշ գումար մը վը ճարել Հիւանդանոցի Սննուելին:

Բազդասարար աւելի լաւ արդիւնք մը ձեռք բերելու համար Հոգաբարձութիւնս, պայմանաւորուեցաւ նաև կեւոն էֆ. Տաքէսեանի հեա, վլայեալ ի գիւղատընասութեան, և անոր յանձնեց Հիւանդանոցի սեփական անառոց խնամածութեանը հետ, Հիւանդանոցի հանդիպարկաց պարտէզին սուհմանալից 150 արտավայր հոգերուն մշակութիւնը. առ այս մեքնեայի և սերմնցուի համար 120 ոսկոյ չափ ծախք մը եղաւ թէւ, սակայն յուսալի է որ ներկայ տարուան արդիւնքարերութենին նոյն ծախքին վոխարէնը կ'ստացուի և հետզհետէ կը գոյանայ Ենթազրուած հասոյթը. այս որոշման հստեւ մասօք Հիւանդանոցի սեփական կովերու արագրութենին մնաւ մասամբ կը մասակարարուի պատապարելոց աւասար ու անարատ կաթն ու մածունը:

Հոգաբարձութիւնս որտի գոհունակութիւնը ունեցաւ օգտութեու առաստաճեռնութենին բարեսէր աղգայնոյ մը, Մեծ. Կորտապետ էֆ. Արխանետինի, որ ի իշտառակիր հանդուցեալ ծնողաց, իր ամձնական ծախքովը, (զրիմէ 150 լիր. օսմ.) կառոյց Հիւանդանոցին համար փուռ մը, որ կը պատրաստուի արդէն և ամսէ ի վեր, պատըսպարելոց օրական հայը յատուկ պաշտօնէից ձեռք, այս միջոցաւ տարեկան կարեւոր շահ մը իրականացնել յուսալի է:

Ս. Յակորայ Որբանոցի ինդիրը բաւական ծանր զբաղման մը առիթ տուաւ Հոգաբարձութենին անցեալ շրջանին: Այսին խնդիրը ծագում առաւ յիշեալ Որբանոցի սաներուն մէջ վարժարանական կարգապահութեան դէմ յառաջ եկած ըմբոստական շարժումէ մը, որ անօրինակ ու անակնկալ էր Տարր. Նախակրթարանի մը ուսանողաց համար, և որ բաւական զբաղեցաց մէկէ աւելի պաշտօնական մարմինները: Որբանոցի ուսանողաց սոյն անսպատշաճ ընթացքին հետեւանօք, նախորդ Պատկ. Քաղաք. Ժողովոյ հաւանութեամբ Որբանոցի համար կազմուած Խնամակազութիւնը հրաժարեցաւ. ուսուցչական խումբը Վարչական տնօրինութեամբ ցրուեցաւ և դասաւանդութիւններն ալ ընդհատուեցան բաւական ժամանակի: Պաշտօնական մարմնոց կողմէ կատարուած քննութեանց համամատ որոշուած էր նախապէս ըմբոստական շարժման պարագուի հանդիսացող աշակերտները Որբանոցէն արտաքսել, սակայն այն որոշման գործադրութիւնը գոյուարութեանց տեղի տալով, ուր ուրեմն Ազգ. Պատկ. Վարչութիւնը Հոգաբարձութեան հետ համաձայնութեամբ յարմար գատեց որ «Որբանոցի աններէն որոնք ծնողք կամ յայտնի պաշտպան մ'ունին», տակաւ առ տակաւ վիրագարձուին անոնց մօտ, իսկ մեռացեալ որբերը մեան Հաստատութեան մէջ և անոնց թուոյն և ուսումնական կարողութեան համաձայն աւսուցիներ կարգուին իրենց ուսումը

լրացնելու համար» : Պատկ . Վարչութեան սոյն անօրինութեան գործադրութեանը ձեռնարկած է արդէն Հոգաբարձութիւնս , սակայն ծնողը կամ պաշտպան ունեցող ասներէն ոմանք կը զմկամուիին մեկնիլ Որբանոցէն , և նոյնիսկ արձակեալներէն ոմանք կը վերադառնան : Հոգաբարձութիւնս կը շարանակէ աշխատիլ որպէս զի Որբանոցը յատկանայ իսկապէս որդ և անտէրունջ տղայոց , ինչպէս կը տրամադրէ արդէն Ազգ . Սահմանադրութիւնը : Կը թուի թէ նրիթական մասակարարութիւնը գիւրին ընծայելու նպատակաւ է որ ժամանակին Որբանոցը Հիւանդանոցի շրջափակին մէջ հաստատած էն . ամէն պարագայի մէջ սակայն յարմար կարգադրութիւնն մը չէ , բոլորովին տարրեր նպատակներու սահմանուած երկու կարեւոր հաստատութեան հոգը և ինամքը յանձնել միտկ պաշտօնական Մարմոյ մը , այս կերպով աստիճան մը ևս զժուարացնելով նոյն Մարմոյն պաշտօնը :

Այս գժուարառութեան պատճառաւ է որ գրեթէ ամէն Հոգաբարձութիւն ջանացած է Որբանոցին համար կազմել ինսամակալութիւններ , որոնք սակայն յանախն չեն յաջողած թիելուցնել Հոգաբարձութեան բնուը :

Մագթելի է ամարքին որ Ազգը բաղդն ունենայ ողջունելու յատ մօտաւոր ժամանակի մը մէջ բացումը Դարսովկովեան Ազգ . Որբանոց-Արհեստանոցին , ուրայն ինսամակալութեան մը վարչութեան ներքեւ , բաւ համարելով որչափ որ զոյուեցաւ ներկան ապագային , այն ատեն հաւանականարար Որբանոցի լինդիրը կը գտնէ իր վերջնական լուծումը :

Առ այժմ ծանօթ ըմբոսաւական շարժման պարագաւոխ հանդիսացող 10 տղաք գուրս հանուած են Որբանոցէն և ներկայ 910—911 գպրոցական տարւոյն համար կազմուած է Ուսուցչական խումբ մը , որ պիտի աւանդէ երկու սեռէ ուսանողներուն Տար . Նախակրթարանի յատուկ Կրթական ծրագրին սպառունակած նիւթերը :

Ահաւասիկ Հոգաբարձութեան քսանամսեայ պաշտօնավարութեան տեղեկագիրը , իր ընդհանուր գիծերուն մէջ :

Հոգաբարձութիւնս յաւակնութիւնն չունի ըսկու — ոչ իսկ կարծելու — թէ նշանակելի ծառայութիւնն մը կրցաւ մասուցանել Հիւանդանոցին . սակայն կրնայ գէթ խղճի հանդարասութեամբ յայտնել թէ տուեալ միջոցներով և պարագաներու բերմամբ , ըրաւ ինչ որ կրնար , ինչ որ պէտք էր ընկել , հաւատարմութեամբ կատարելով իր ատենամած գժուար պաշտօնը :

Շաբթուան մէջ երկիցս գումարուելով ուշադրութեամբ քննուած է Հիւանդանոցի վերաբերեալ ամէն խնդիր , և ո՞ն է ինդրոյ մասին իր որոշումները տուած է յաճախ միաձայնութեամբ և միշտ մնամասնութեամբ : Հոգաբարձութեանս ուղղութիւնն եղած է գործել անաշառութեամբ , գործել ուղղամասութեամբ և այս ուղղութեանն չէ շեղած իր պաշտօնավարութեան ամրով ընթացքին մէջ :

Մնամք որդիսական խորին ակնածանօք

Անգամ Հոգաբարձութեան

ԲԱՐԵՆԴ ԱԻԵՏԻՍԵԱՆ

Ատենապետ

ՄԱԳՍՈՒՏ ՆԱՅԿԻԼԵՑԵԱՆ

Ատենադպիր

ԿԱՐԱՊԵՏ ԽԱՆՃԵԱՆ

Գանճկապետ

ՏՈՒԹ. ԿՐՊ. ԽԱՆՃԵԱՆ

Տօնական

ՏՈՒԹ. ԵՐՄԻԱՆԴ ԱՐԿՂԵԱՆ

Տօնական

ԹՈՎԱՀԻԳ ԱՐԹԻԵԱՆ

Գանճկապետ

ՆԵՐԱԿ ՕՀԱՆԵԱՆ

Տօնական

ՕԴԱՆ ՔԱՐՄԲԵԱՆ

Տօնական

Հոգաբարձութիւնը կը շարունակէր իր պաշտօնը, երբ Ազգ. Կեդր. Վարչութեան մասն մաղմարտ 1911 Յունիուր 31 թուակիր և 1028 համար պաշտօնագրով մը կը յայտնէր թէ, «Համաձայն Ազգ. Երեսի. ժողովոյ որոշման, Կեդր. Վարչութեան կրօն. և Քաղաք. ժողովները, վերստանածնած են իրենց պաշտօնը՝ մինչեւ իրենց յաջորդին ընտրութիւնը» և կը յանձնարարէր Հոգաբարձութեանս իրը թեւակից մէկ ճիւղը կեդր. Վարչութեան, շարունակել իր պաշտօնը: Բայ այսմ, Հոգաբարձութիւնս իր պաշտօնին վրայ մնաց մինչեւ Յունիուր 15:

1911 Յունիուր 16ին նոր Հոգաբարձութիւն մը կ'ընտրուի՝ հետեւեալ կերպով. —

Տեսարք Ռ. Աւետիսիսան, Յ. Արքիկեան, Անտոն Թարաք, Կարսապետ Խանձեան, Տոքթ. Գ. Ճէլալ, Մ. Շահպազ, Յ. Սէլիկեան, Ն. Օհանեսան, Տոքթ. Գ. Վընտրզլեան, որոնցմէ ումանք հրաժարական տուած ըլլուզով, Հոգաբարձութիւնը ի վերջոյ կազմաւեցաւ հետեւեալ կերպով. Տեսարք՝ Բ. Աւետիսիսան, Կ. Խանձեան, Ա. Թարաք, Յ. Համամձեան, Ն. Օհանեսան, Տոքթ. Գ. Ճէլալ, Մ. Շիրինեան, Տոքթ. Ֆինտըդեան և Մ. Էգիքըճեան:

Իսկ 1912 Հոկտեմբերին Հոգաբարձութիւնը դարձեալ վերակազմութեան հնաթարիուեցաւ Ազգ. Կեդր. Վարչութիւնը վերակազմով զայն, նախորդ անդամներէն Բ. Աւետիսիսան, Կ. Խանձեան, Մ. Շիրինեան, Մ. Էգիքըճեան և Ն. Օհանեսան էֆէնտիները իրենց պաշտօնին մէջ վերընտրած և Տոքթ. Զիրինկիրեան, Տոքթ. Պահէպահանեան, Ն. Դուկասեան և Մ. Թէլիկան էֆէնտիները նոր անդամ կորդած էր և հրաւիրած զանոնք որ 1912 Հոկտ. 31ին նիստ գումարեն: Ցիկեաներէն Մ. Էցէպէճեան և Մ. Թէլիկան էֆէները հրաժարած ըլլուզով, ըստ առաջարկութեան Հոգաբարձութեան, Յ. էֆ. Համամձեան վերասին անդամ ընտրուեցաւ և Մ. Թէլիկան էֆ. ի յաջորդ նշանակուեցաւ Տոքթ. Ա. Թոփեճեան էֆ. որով, Հոգաբարձութեան անդամոց թիւը ամբողջացաւ հետեւեալ կերպով. —

Տեսարք Աւետիսիսան Բարսեղ, Թոփեճեան Տոքթ. Արմենակ, Խանձեան Կարսապետ Համամձեան Յակոբ, Դուկասեան Նշան, Շիրինեան Միհրան, Տոքթ. Զիրինկիրեան, Տոքթ. Պահէպահանեան, Ներսէս Օհանեսան: (\*)

Հոգաբարձութեան այս յաճախակի փոխիտութիւնները, բաւական են ցոյց տալու արդին թէ Հիւանդանոցի մատակարարութեան շուրջ այնքան գժուարին վիճակ մը ստեղծաւած էր որ, շատեր չէին համարձակեր պաշտօն ստանձնելու Հիւանդանոցի Հոգաբարձութեան մէջ և անոնք որ ի սկզբան յօժարութիւն յայտնած էին՝ մէկ կամ երկու նիստի ներկայ գտնուելէ յետոյ կը հրաժարէին:

1907 Հոկտեմբեր 30ին, Հոգաբարձութիւնը Տիրկնանց Խնամակալութիւն մը կազմած էր հետեւեալ կերպով. —

Տիրկնայք Զ. Տիրկէք (Ատենապետ), Ն. Աէֆէրեան, Յ. Դարամանեան, Թ. Իրրանուեան, Ա. Մանուկեան (գանձապետ), Մ. Յակոբեան, Բ. Շահպազ, Տոքթ. Դաւիթեան, Պ. Խօրսասանեան և Օր. Մասի Միհրէնտիսիսան (Ատենապալի):

Այս Խնամակալութիւնը սակայն՝ նախորդ Հոգաբարձութեան հետ հրաժարած էր: Արդի Հոգաբարձութիւնը նկատելով որ նոյն Խնամակալութիւնը օգտակարութեան կարեւոր բաժին մը ունեցած է, որոյած է զայն նոյնութեամբ վերընտրել (1909 Ապրիլ 18ին): բայց չէ յաջողած:

(\*) Տեսարք Կարսապետ Խանձեան եւ Տօքթ. Աշոտ Պահէպահանեան մէկ բանի ամիս յետոյ հրաժարած ըլլուզով, Հոգաբարձութիւնս այժմ 7 անդամներէ կը բաղկանայ:



Կիւլպէնկեան Յարկաբաժին

# ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ



## ՀԱՅԻ ԵՒ ՄՍԻ ՊԱՐԷՆԻ

1908ին Օսմ. Սահմանադրութեան վերահաստատութենէն յետոյ, Հիւանդանոցի յատկացնեալ հացի և մաի պարէնը գաղքեցաւ, ու անոր միստարէն յատկացաւ զրամական նպաստ մը, նոյն տարուան համար, զրուշ 400,858,50: Այս գումարը 1909 և 910 տարիներու մէջ թէւ զեղչուեցաւ 255,499.25 զրչ.ի, սակայն Օսմ. երևափոխան Դ. Զօրապ և Տոքթ. Ն. Տաղաւարեան էֆ. ներու մօտ Հոգաբարձութեանս կատարած դիմումներունետեանքով և Օսմանեան Խորհրդարանի մէջ այս նպաստին բարձրացման պէտքին մասին ցոյց արու ած ստիպութեան վրայ, Խորհրդարանին բարեցէալ մէկ որոշումով այս նպաստը բարձրացաւ 362,897 զրչ.ի:

Բայց որովհետեւ Հիւանդանոցի հասոյթեները չէին բաւեր մատակարարութեան ծախուց, Հոգաբարձութիւնս պէտք տեսաւ որ հիւանդարանը փոխանակ տանասարակ ձրի գարմանատան մը ըլլայու միմիւն Ազգին չքաւոր գասակարգին համար, այնաեղ քննդանուած ամեն կարգի հիւանդներ՝ անոնք մանաւանդ որ բան մը վճարելու կարող են, մասնակցին իրենց գործմանին համար եղած զոհողութեանց: Քննութիւններու արդիւնքով երեւան եկաւ գժիքախտաբար, որ նոյն իսկ քիչ շատ բարեկացիկ անձեր, անհատական յանձնաբարութիւններով, կամ թաղ. Խորհուրդներու վկայագրերով քննդանուած էին Հիւանդանոց իրեւ բացարձակ չքաւոր: Հոգաբարձութիւնս ստիպեց այդ կարգի պատապարևանները, որ իրենց կարողութեան չափով զումար մը վճարին և այս կերպով բաւական նշանակիլի հասոյթ մը գոյացաւ, թէւ կարելի չեղաւ բողոքովին արգիլել յանձնաբարականներու այս գատապարտելի ձեւը, հակառակ կրկնակի պարագրութեանց և խիստ զեկուցումներու:

## ՄԱՏԱԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԵՒ ՀԱՍՈՅԹԻ ՄԻՋՈՑՆԵՐ

Ի՞նչպէս ցոյց կուտան վերոդրեալ տեղեկութիւնները և Հոգաբարձութեանց տեղիսպիր-ճամակները, մատակարարական դժուարութիւններու ճնշեարկուած են վերջին քրջանի Հոգաբարձութիւններու երր մէկ կողմէ Հիւանդանոցին պահանջները կը բազմապատկուէին, միւս կողմէ հասոյթի ու մատակարարութեան միջոցներն ալ, ընդհակառակն կը նոււազէին:

Արդարեւ, 1908 Հոկտ. 6ին կը տեղեկագրուէր թէ պիյուկի հացը որ Սպարապեաի Դուռնէն կը արուէր, դադրեցուցաւուծ է: Բայց չնորհիւ կատարուած դիմումներուն թէ Եպարքոսութեան և թէ՛ Սպարապետութեան մօտ, կարելի Կ'ըլլայ պետական հացի հայթայթումը ապահովիլ առժամապէս ցնոր անօրինութիւն: Այնպէս որ պահ մը երեւան եկած այս մէկ դժուարութիւնը բարձրուած կ'ըլլար: Բայց ասիկա բաւական չէր:

Դժբախտութիւն մը ևս այն էր որ գաւառներէն եղած նիւթական նուիրատու-  
ութիւնները, մէկ քանի տարիներու երաշտութեան և զիւղացիներու զինուորացրու-  
թեան հետեւանոք, զգալի կերպով նուազեցան, Այս կերպով Հիւանդանոցի մա-  
սանը մասամբ զրկուեցաւ իր պարէններէն, քանի որ գաւառներէն եկած նուէր-  
ներն էին, ընդհանրապէս, լուրիս, սիսես, սոխ, ձիթապատզ, ձէթ, պոլկուր, թար-  
խանս, ևն .:


Դաղրած էր նաև, Մանթաչօֆի նաւթագործարանին կողմէ տարեկան 700 թի-  
թեղ քարիւզի նուիրատութիւնը, և թէե այս առթիւ գրուած է եղմիածին՝ Ս.  
Հայրապետին որ Պաքուարնակ նաւթաշէր ազգացիններու դիմումը ըլլայ, բայց ար-  
դիւնք չէ ունեցած :

**Հոգաբարձութիւնս ամէն կորիլիութիւն կ'ուզէր փորձել,** ամէն ջանք և ճիգ կը  
թափէր հասոյթի նոր միջոց մը գտնելու համար : Կացութեան պահանջն ալ այս էր :

Ազգացիններէն ոմանք առաջարկներ ներկայացուցած են Հոգաբարձութեան՝ յա-  
նուն և ի նպաստ Ազգ . Հիւանդանոցի ապրանք վաճառելու և կամ գործառնութիւն  
ընելու և իրենց շահուն համեմատութեամբ Հիւանդանոցին բաժին մը վճարելու պայ-  
մանաւ (տպարան բանեցնել, կօչիկ վաճառել, մատախ վաճառել, Անատօլուի երկաւ  
թուլույ միջոցով ապրանք փոխադրել, ևն .) սակայն ասոնցմէ և ոչ մէկը (բայց ապ-  
րանք փոխադրելու պարագայն) յաջողած է, որովհետեւ Հոգաբարձութիւնները ինչ  
ինչ նկատումներով յարմար գատած և առաջարկած են որ փոխանոկ շահու համեմա-  
տութեամբ բաժին մը վճարելու, ամսական որոշ գումար մը արուի, և սակայն առա-  
ջարկունները չեն համաձայնած : Միայն, ինչպէս ըսինք, ապրանքներու փոխադրութեան  
գործը առաջարկողներէ Տիրոր կարապետ Օրաքեան և որդիք յանձնառու եղած են  
ամսական որոշ գումարի մը վճարման փոխարէն յանուն Ազգ . Հիւանդանոցի Անատօ-  
լուի երկաթուղույ միջոցով ապրանք փոխադրել: Բայց ատեն մը ետքը յանձնա-  
ռունները թէե դաղրիցան իրենց ամսական վճարումները ընելի, սակայն եղած թելադ-  
րութիւններու վրայ շարունակեցին ամսական նորատը տալ ըստ առաջնոյն :

1912 օգոստոսին՝ Օսմ. առևետրուկան զրամատան հետ համաձայնութիւն գո-  
յացաւ 1500 Օսմ. ոսկոյ վիճակահանութեան մը համար, որ արտօնուած էր  
կառավարութեան կողմէ . իւրաքանչիւր առմասկ ¼ Օսմ. ոսկոյ արժէքով 6000 հատ  
առմասկ պիտի վաճառուէր որմէ զոյսնալիք 1500 ոսկին 500 ոսկին պիտի յատկաց-  
ուէր պարգելի, 500 ոսկին՝ Ազգ . Հիւանդանոցի սնառուկին և 500 ոսկին՝ վիճակահա-  
նութեան համար հարկ եղած ծախքերու և Բայց այս ծրագիրը յետագուեցաւ . Թուրք-  
եականական և ապա Պալքանեան պատերազմներուն երեւան գալուն հետեւանքով : Ետ-  
խորդ ջրաններէ գոյացած պարտքերու վճարման համար Հոգաբարձութիւնս խորհեցաւ  
պարգելաւոր միծ վիճակահանութիւն մը կազմակերպել և Պատրիարքարանի մի-  
ջոցաւ քանից դիմումը ըրբաւ կառավարութեան արտօնութիւնս ստանալու համար: Բայց  
պետական խորհուրդը անընդունելի գատեց եղած առաջարկութիւնը և զլացաւ հարկ  
եղած արտօնութիւնը, որով այս ձեռնարկը մնաց անհետեւանք :

Մեր հասոյթի միջոցներէն մէկը կազմող սիկասի թուղթին գալով, 1911 Յու-  
նիսին որոշուեցաւ չնչել Մարտիկ էֆ . Շիրինեանի հետ 1905 Յունուար 1ին կիցուած  
սիկասի թուղթի պայմանագրութիւնը, և հրահիրուեցան նոր յանձնառուներ որոնցմէ  
Օննիկ էֆ . Մարտիկեանի հետ համաձայնութիւն գոյացաւ ամսական 40 ոսկոյ



որոշ գումարի մը փոխարէն իրեն յանձնել սիկառի թուղթի պատրաստութեան և վաճառման գործը:

Այսպէս Հոգաբարձութիւնս զանազան միջոցներով և հասոյթի յաւելման համար ունեցած ջանադրութեամբ, ինչպէս նաև բարեսէր ազգայնոց նուիրատուութեամբ յաշղողեցաւ մատակարարութիւնը լաւ ուղղութեան մը մէջ դնել, սոիպուած ըլլալսվ հանդերձ նախապէս զոյացած պարտքերուն ի հայիւ պարբերաբար վճարումները ընելու:

Կալուածոց մատակարարութիւնը մեր նախորդին օրով յանձնուած էր ուրոյն Յանձնաժողովոյ մը, որուն անդումներն էին զինաւորաբար Խաչիկ էֆ. Խորասաննեան, Դրիգոր էֆ. Գառնակերեան և Բարթող էֆ. Հիւնքեարայէկնտեան . ասոնք զնուատտեի ջանքերով աշխատեցան արդիւնաւորել Հիւնդանոցի կալուածները (\*), նոյն Յանձնաժողովը Հիւնդանոցնոցի կալուածոց ամսակոն վարձքերէն և անպէտ ու անշահարեր կալուածներու վաճառուումէն զոյացած գումար մ'ալ ունէր իր արամազդրութեան տակ, որ անձեռնմխելի կը մնար և պիտի յտակացուէր հասութաբեր կալուածի մը զնան: Հոգաբարձութեանս համար ուրախալի է յիշել այս առթիւ թէ իր պաշտօնավարութեան օրով, եղած են նորանոր կարեւոր նուիրատուութիւններ, որոնք կ'երեւան տեղեկագրիս կից Կալուածական ցուցակին մէջ:

### Հ Ի Ւ Ա Ն Դ Ա Ն Ո Յ

Մշտապէս իր վրայ խօսիլ և գրել տուած խնդիր մը — այն է՝ Ազգ. Հիւնդանոցը դնել եւրոպական տիպար Հիւնդանոցի մը աստիճանին վրայ: Եւ պէտք է ըսել թէ այս ուղղութեամբ ևս ո՛չ մէկ ջանք, ո՛չ մէկ կարկիռութիւն խնայուած է: Եւ մեր Ազգ. Հիւնդանոցը, իր բոլոր թերութիւններով հանդերձ, այսօր ի վիճակի է շատ մը տեսակէտներով մրցելու օտար նոյն օրինակ հաստատութեանց հետ:

Դժբախտաբար, մեր հասարակութեան մէջ աիրող թիւր ըմբռնում մը, թէ ինչ որ ազգային է՝ չի կրնար գոհացուցիչ և կատարեալ հանդամանքով մը ներկայանալ, կը մէկ ազգայիններէն շատեր — անհատներ անշուշտ — որ ի հարկին դիմեն օտար Հիւնդանոցներ և այսպէս Ազգ. Հիւնդանոցը զուրկ կը մնայ կանոնաւոր և բաւարար վճարում ընոտ հիւնդներէ:

Ինչպէս ասկէ առաջ, վերջին շրջանին ալ տնօրինութիւններ եղած են Հիւնդանոցին կանոնաւորութիւնն ու կատարելութիւնը տապահող և ուրախ ենք յայտաբարելու թէ մանաւանդ վերջին տարիներու մէջ, սկսած է աւելնալ թոշակաւոր Հիւնդանոցներու թիւրը:

Թոքախտաւորներու համար նախապէս մէկ որահ յատկացուած էր, սակայն նկա-

(\*) Կալուածոց սոյն Յանձնաժողովը իր համարատուութիւնը ընելով հրաժարած է: Սոյն աշխատութիւնը ստանձնես են յետոյ առժամաբար Սարդիս էֆ. Էսմերիւան և Կարապիտ էֆ. Խանձնեան Հոգաբարձութիւնս շանսդիր եղած է որ, կալուածներու արդիւնաւորման համար, մեռնաս եւ կարող ան-

տեղով որ սրանցը անբաւական կուգայ նոյն ախտով վարակուած պատսպարեալներու թուոյն համեմատութեամբ, և նկատելով որ թեթև կամ առաջին աստիճանի թոքախտաւորներն ալ ուրիշ սրանի մը չդոյցութեան պատճառով, ծանր և յառաջացեալ թոքախտաւորներուն մէջ կը դրուին, պարագայ մը որ թէ՛ խշճի և թէ՛ դդուշական պայմաններու հակառակ է, կ'որոշուի երկու յարմար սրանց'ը ևս յատկացնել նոյն հիւանդութեան համար :

1910ին քօյերայի համաճարակին առթիւ Հոգաբարձութիւնս հարկ տեսաւ մասնաւոր միջոցներ ձեռք առնելու, և այդ առթիւ ենթարկուեցաւ կարգ մը դժուարութիւններու՝ մասնաւոր տաղաւարի չդոյցութեան պատճառով։ Այսոքս որ, հակառակ ձեռք առնուած խիստ միջոցներու, մէկ քանի դէպքեր պատահեցան :

Հետեւ արար, ինչպէս բազմիցս շեշտուած է, հարկ անհրաժեշտ է կարգ մը մասնաւոր տաղաւածներու շինութիւնը։

Աւելցնենք նաև որ Պալքաննեան պատերազմին առթիւ Օսմ. վիրաւոր զօրաց համար 30 անկողին տրամադրուեցաւ։

Ակնարոյժ Տիգր Տօքթ. Մարգիս Սէրթեան (1911 Մարտ 30) թուակիր նամակաւ մը Ազգ։ Հիւանդանոցի ակնարութական ճիշդը ձրիարար վարեկու փափաքը յայտնելով, կ'առաջարկէր հարկ եղած արտօնութիւնը տալ իրեն, առայժմ շարաթը 1-2 անգամ յաճախել Հիւանդանոց։ Հոգաբարձութիւնը գոյութեամբ ընդունեց Տը. Սէրթեանի առաջարկը, և աչքի հիւանդութեան ենթարկուած հիւանդներու համար ևս սահմանեց 8 անկողին։ Տօքթ. Սէրթեան էֆ. համաձայն իր յանձնառութեան շարաթը անգամ մը կայցելէ Հիւանդանոց և կը դարմանէ աչքի հիւանդութենէ վարակեալ աղքատ հիւանդները։

Իսկ Տօքթ. Տառուրեան էֆ. երկար տարիներէ ի վեր կը դարմանէ շարաթական այցելութեամբ, կոկորդի, քթի և ականջի հիւանդութեանց ենթակայ աղքատ հիւանդները։


Աստամարոյժ Տօքթ. Ն. Խաչատրւեան կանոնաւորապէս այցելելով Հիւանդանոց, կը դարմանէ ակռայի հիւանդութեան ենթակայ բոլոր պատսպարեալները։

1907 տարւոյ Հոկտեմբեր ամսոյն Անգիլիացի երեք հիւանդապահութիւններու պաշտօնարութեան շրջանը կը լրանար։ Իրենց պաշտօնավարութեան առաջին տարեթոշակը վճարուած էր Յովիհաննէ էֆ. Յակոբեանի կողմէ, այս է՝ 250 Օսմ. ոսկի։ Բայց իրենց օգտակարութիւնը զնտնաւուած ըլլարով, Հոգաբարձութիւնը կ'որոշէ աննոց հետ տարուան մը համար ևս պայմանաւորուիլ, թոշակները Հիւանդանոցի սնտուկէն վճարուելու պայմանով։ Սակայն իրենցմէ երեսուք պայմանաժամին լրանալէն առաջ հրաժարած էին, և երրորդը միայն շարունակեց իր պաշտօնը ցլրումն պայմանաժամին։

Իսկ 1910 Հոկտեմբեր 28ին, Հիւանդանոցի երեք բժշկապեաններու հետ կատար, ուած խորհրդակցութեան մը համաձայն, Օր. Մ. Պալքաննեան պետհիւանդապահունի ընտրուեցաւ և միանդամայն հիւանդապահներու յատուկ ներքին կոնոնադիր մը պատրաստուեցաւ։

Գալով բժշկական մարմնոյն, Տօքթ. Շէրպէթձեան էֆ. 1908 Փետրուարին կը հրաժարի բժշկապետութեան պաշտօնէն և իրեն յաջորդ կ'ընտրուի Տօքթ. Դաւիթեան էֆ.։ Վիրարուժապետ Տօքթ. Զարդարեան էֆ. ալ 1909 Մեպտ.ին հրաժարելով, իրեն յաջորդ կ'ընտրուի Տօքթ. Լեւոն Մալխասեան։

Գործադրության պահանջ Արագիլ



Աւելորդ կը համարինք, մանրամասնութեանց մէջ մտնելու, բացատրելու. համար այն յառաջդիմութիւնները որոնք հետպհետէ ներմուծուած ած են Հիւանդանոցիս ներքին և արտաքին ճիւղերու մէջ, օգտուելով զիտակին նորանոր մնթուաններէ, որոնք կը կիրարկուին եւրոպական հիւանդանոցներու և յիմարանոցներու մէջ: Ներկայ տեղեկագրին կցուած վիճակագրութեան թուանշանները կը բացատրեն այդ ամէնը, հետեւաբար փափաքելի է որ այս տեղեկագրիր աչքի առնելու ունեցող հետաքրքիր անձինք իրենց ուսումնասիրութեան առարկայ ընեն այդ վիճակագրութիւնը:

Ցաւալի է որ Հիւանդանոցին հեռաւորութիւնը, արդիք կ'ըլլայ չատ անգամ որ ամեն կարգի աղջայիններ յաճախ այցելեն նոյն Հաստատութիւնը, իրենց աշխալը տեսնելու հետզհետէ գործադրուած յառաջդիմութիւնները: Բայց Հոգաբարձութիւնն զոհութեամբ կը հաստատէ որ այս արդիւնքին պատճառաւ հետզհետէ կը զիմն թօշակաւոր հիւանդներ, առաւելութիւն դաննելով նոյն իսկ իրենց գարմանուած օտար հիւանդանոցներու վրայ, ուրէկ կը դիմն Ազգ: Հիւանդանոց:

Հիւանդանոցի անհրաժեշտ պէտքերէն մէկը նկատուած էր Միքրոպազնական աշխատանոցի մը հաստառութիւնը: Հոգաբարձութիւնն այդ պէտքը լրացուց 1912ին՝ չնորհիւ առատամեծնութեան Գալուստ Էֆ. Կիւլպէնիներին, որ այդ նպատակաւ նույիրեց 2000 ֆր. և այսօր Հաստատութիւնը օժտուած է Միքրոպազնական աշխատանոցով մը, մասնագէտ պետք մը հսկողութեան տակ:

Սակայն Հիւանդանոցը տիպար Հաստատութիւն մը ըլլովու համար պէտքը ունի տակավանին յրացուցիչ մասերու ինչպէս, յիմարանոցի նորոգութիւնը զոր խոստացած է ի գլուխ հանել մօտաւոր ժամանակի մէջ Աթանակ Էֆ. Էնանեան, Ուչօթքէնեան Ք. Շառագայթներու հաստատութիւնը, ինչպէս նաև կառուցումը թօքախատաւորներու յատուկ տաղաւարի մը, և զետեղումը բարոյինելով և երեկարական լուսաւորութեան:

Այս կասարելագործութիւնները չեն կրնար երեւան գալ՝ Հիւանդանոցի պավորական պէտքերէն ինայցելով, այլ անհրաժեշտ է որ անհաստական նույիրապուութիւններ ըլլան այս նպատակաւ, ինչպէս կ'ըլլան դրացի Յունաց Հիւանդանոցին:

## Ո Բ Բ Ա Ն Ո Յ Ը

Որբանոցը, որուն ճակուատագիրը ցարդ այնքան սերտ կերպով կապուած էր Ազգ: Հիւանդանոցի բախսախն հետ, առանձին մտանողութեան առարկայ եղած է միշտ հոգաբարձութիւններու համար: Ոչ միայն Հիւանդանոցի նման ինքն ըստ ինքեան կեանքի և մահուան միջնեւ սեմ մը եղազ Հաստատութեան մը տիրագին մթնոլորտը, այլ և անոր կրած բոլոր նիթական ճակուատութիւնները իրենց հետեւանքները զգացած են Որբանոցին վրայ, որ սովորյան տոսով սերունդի մը կենսաւէտ բայցնը պէտք էր ըլլալ: Ի մի բան անքնականոն երեւոյթ մըն էր Որբանոցին կապուած մնութը Հաստատութեան մը՝ որ հիւանդներու, յիմարներու և անկարներու պատապարան մըն է միայն, և արդէն այս հարցը բազմից յու զուած է իրաւամբ ազգային և լրացրական շրջանակներու մէջ, միշտ սպասելով այն օրուան յորում Որբանոցը վերջապէս, չնորհիւ Գարակէօղեան կտակին պիտի անջատու էր Հիւանդանոցէն փօխազրուելով այլուր:

Այս անհրաժեշտաւութիւնը զգալի էր մանաւանդ նաև այն վիճակին հետեւանոք որուն ենթարկուած կը մնար Ս. Յակոբի մանչերու Որբանոցի չէնքը, արդէն խար-

խուլ և փլչելու սպառնալիքին տակ, ծովու փոթորիկներու խստութեան դիմաց, այնպէս որ հզգ որբերը երկիւղալի վիճակի մը մէջ կը գոնուէին:

Ուրախ ենք սակայն այս անգամ աւետելու թէ Որբանոցի փոխադրութեան գործը կատարուած իրողութիւն մըն է արգէն, և որբերը ի մօտոյ պիտի փոխադրութիւն Շիլիի Որբանոցը (\*):

\* \*

1909 Յուլիս 2ին, Հոգաբարձութիւնը Որբանոցի Խնամակալութիւն մը կը կազմէ հետեւել կերպով.

Տեարգ՝ Վաւահապուհ Մանս կեան, Յակոբ Գորեսան, Լեւոն Բանիկեան, Զարմայր Ճշմարտութանան, Հեթում Սեմենան, և Ներսէս Օհանեան: Խոկ ի զիմաց Հոգաբարձութեան՝ նոյն Խնամակալութեան անդամակից կը կարգուի Տոքթ. Կարապետ է Ք. Խանճեան:

Ցիշեալ Խնամակալութիւնը որբան ալ գնահատեի ջանքեր ընծայած ըլլայ Որբանոցին բարելաւան, բայց և այնպէս իր կուրքէն անկախարար նոյն հաստատութեան մէջ պատահնեցան մի քանի անհամորժ միջուղի կար, զորս հոս արձանագրելու տիտոր հարկին մէջ կը գտնուինք: Առոնք կը վերաբերին Որբանոցի ներքին կարգապահութեան:

Արգարեւ, 1908 ապրույ Մայիս ամսոյ մէջ Որբանոցի աշակերտաները տեսչութեան զէմ ըմբոսացած ըլլալով, անոնց պարագլուխներէն հինգ աշակերտաներ կը ճամբուին: Կ'երեւայ սակայն թէ այս կարգազրութիւնը բոլորովին աւանդքը չէր առած կացութեան, որովհետեւ ըմբոսական այդ արամազրութիւնը ատեն մը ևսքը նորէն երեւան կուգայ:

1909 Գեկտ. 1/14 թուակիր գրութեամբ մը Որբանոցի Խնամակալութիւնը կը հրաժարի, ոյն պատճառով որ Որբանոցի խառնաշփոթութեանց պարագլուխ եղող 24 ընդհանրապէս չափահան՝ տղաք Որբանոցէն չին արտաքառուած: Հոգաբարձութիւնս սակայն նոյն ատեն մերժեց այս հրաժարականը, բայց Խնամակալութիւնը չստանձնեց իր պաշտօնը և Հոգաբարձութիւնս հարկադրուեցաւ, որբերը յանձնել դաստիարակի մը խնամքին:

Այս անհամոյ գէպքերուն վրայ, Ուսումն. Խորհրդոյ կողմէ քննութիւն մը կատարուելով, որոշուեցաւ անմիջապէս և առժամապէս վակել Որբանոցը, ցրուել բոլոր աշակերտաները և արձակել ուսուցիչները: Ուսումն. Խորհրդոյ իր կատարած քննութիւնը աեղեկազրեց Ս. Պատրիարք հօր որ հրահանգեց Հոգաբարձութեանս կարեւորը անօրինել:

Հոգաբարձութիւնը նկատելով որ յարմար չէր Որբանոցը բոլորովին փակել և որբերը թողուի իրենց բազզին՝ անտել և անպատճառ, բաւականացաւ դասահօսութիւնները միայն գաղրեցնելով ըստ հրահանգի, և ցնոր անօրինութիւն հսկողներ կարգելով նոյն հաստատութեան մէջ:

Ի վերջոյ, 1910 փետրուարին, որոշուեցաւ յայսնի ճնողք կամ պաշտպան ունեցող տղաքը ճամբել, արձակել նաև չփոթութեանց պարագլուխ տղաքը, իսկ մնացեալ որբերը պահել: Այսպէս ուսուցչական մարմին մը կազմուելով դասախոսութիւնները վերական և շարունակուեցան կանոնաւորապէս:

(\*) Տեղեկազրիս ճբառարակութեան պահուն մանչերու, որբանոցը փոխադրուած է Երշլի:

Բայց կարգապահութիւնը, ինչպէս կ'երևայ, վերջնապէս չեր հաստատուած Որբանոցին մէջ։ Որովհետեւ 1910 օգոստոսին, Որբանոցին սաներէն տասը տղաք վերսահն ըմբռստական շարժման մէջ քանուեցան՝ ուսուցչական մարմինն հանդէպ, ընդհանրապէ արտաքին թելադրութեամբ։ Այս առթիւ Հոգաբարձութեանս կոզմէ կրկին զիտողութիւն եղաւ Վարչութեան, որ վերսափն նկատողութեանս առնելով այս խնդիրը, որուեց հարկ եղածը անօրինել այդ ըմբռստ աղաքը պետական զինուորական վարժարանաց մէջ զնելու համար։

Սպայն այս կարգապահութիւնը չկրցաւ զլուխ ելլի և Հոգաբարձութիւնս ստիպուեցաւ այդ տղաքները իրենց ծնողաց քոյլ խրկիւ ու այսպէսով բարեկարգութիւնը վերջնականապէս հաստատուեցաւ Որբանոցին մէջ։

Այս առթիւ հարկ կը համարինք յիշատակել թէ, Սուչովայի աղգայնոց դիմումն վրայ Հոգաբարձութիւնս Որբանոցին և սաներ խրկեց, որոնք հիմա իրենց պաշտպաններու խնամքը վայրելով, կը պատրաստուին ապագայ ասպարէզներու։

Հիւանդանոցի շրջափակին մէջ կը գտնուեէին 100է աւելի անտէր որբուհներ, որոց վիճակը Հոգաբարձութիւնս խնամքին և ուշագրութեան առարկայ եղած էր, որովհետեւ, անոնց գտնուած յարկը բոլորովին անյարմար էր որբուհներու պատսպարութեան։ Հոգաբարձութիւնս իր պաշտօնավարութեան մշջանին մէջ, անոնց պատսպարութեան և ուսման համար հարկ եղած զոհողութիւնը չվանալով հանդերձ, այսաեցաւ որ որբուհները փոխադրուին յարմար շնչքի մը մէջ և այս նպատակաւ դիմումներ եղան վարչութեան և ուրախ ենք յայտարարելու որ անոնց փոխադրութեան գործն ալ վերջացած կրնայ համարուիլ (\*)։

### ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ

Ի վեղուց անտի, Հիւանդանոցը կարեւոր չափով մը իր գոյութիւնը պարտական եղած է այն նուէրներուն և կտակներուն, որ եղած են բարեսէր անձնաւորութիւններու կողմէ, և Հիւանդանոցին մէջ ցայսօր իրազործուած զանազան շինութիւններն ու կատարելութիւնները արգիւնք են այդ բարեգործական օժանդակութիւններուն։

